իրեն վերկոչը. ժողովրդական առողջ բնազդը իր անկախութեան և ազատութեան, որ մեր պետութեան հիմնաքարն է, հանեց մեզ ծանր տագնապից: Այդ բնազդը հայ ժողովրդին մղեց անձնազոհութեան, որի շնորհիւ և խեղդուեց դաւադրութեան փորձն ու պետութիւնը դերծ մնաց աւելի մեծ ցնցումներից:

Իր հետ ունենալով ժողովրդական այդ մեծ ուժը՝ կառավարութիւնը, ձեր իսկ լիազօրութեամբ, ձեռնարկեց մի շարք միջոցների, թէ անմիջական կերպով չարժումը ճնշելու և թէ վերացնելու չարժման հիմնական պատճառները: Անմիջական միջոց էր այն, որ խորհրդարանի անդամներն ու մտաւորական քաղաքացիները ցրուեցին դաւառները, ժողովրդի ու զօրքի մէջ, իրենց խօսքով պարզելու դրութիւնը: Անհրաժեշտ եմ համարում չեշտել, որ մենք չատ բան պարտական ենք խորհրդարանի անդամների այդ եռանդուն գործունէութեան:

Կատարեցին մի քանի զօրական չարժումներ ցոյց տալու, որ կառավարութիւնը կանգ չի առնի ոչ մի միջոցի առաջ՝ ճնշելու այն չարժումը, որ սպառնում է ժողովրդի կամքը: Թէ զօրքը և թէ կամաւոր մարտիկները գործում էին արագ ու կորուկ. զօրական ուժերի ազդեցութիւնն այնքան մեծ էր, որ բանակը, դլուխ ունենալով զօրական նախարարին, ուղղւում էր դէպի խլրտումների վայրերը, ապստամբներն անմիջապէս հնազանդութիւն էին յայտնում, նոյնիսկ զօրքի տեղ հասնելուց առաջ. այդ էր պատճառը, որ կարճ միջոցում, առանց արիւնհեղութեան, վերջացան խռովութիւնները:

Սակայն եղանք մի քանի շրջաններում յայտարարել զինուորական դրութիւն և կազմակերպել զինուորա-դաշտային ու արտակարգ դատարաններ, որոնց գործունէութիւնը դեռ չարունակւում է:

Միջոցներ ձեռք առնուեցին երևան հանելու խռովարարները. այդ նպատակով կատարեցին խոշոր ձերբակալութիւններ բոլոր շրջաններում, նաև մեր պաշտօնէութեան մէջ: Կառավարութիւնը համբերատարութեամբ ընդունել էր իր պետական պաշտօնների մէջ այնպիսի անձերի, որոնք իր դաղափարական հակառակորդներ էին՝ պայմանով, որ նրանք չմասնակցեն քաղաքական գործունէութեան: Սակայն, չհաղորդելով կառավարութեան հաւատն ու մոռանալով ուած խոստումը՝ նրանք դաւաճանօրէն մտան խռովարարների չարքը:

Ցաւով պէտք է ասեմ, որ խռովութեանց մասնակից էր նաև խորհրդարանի անդամներից մէկը՝ բժ. Արտաչէս Մելքոնեանը: Նա Ալեքսանդրապոլում միացաւ ապստամբներին, դարձաւ ռազմա-յեղափոխական կոմիտէի անդամ և, երբ այդպիսին, մի շարք կարգադրութիւններ արեց: Կառավարութիւնը վերացրեց նրա անձեռնմխելիութեան իրաւունքը և միջոցներ ձեռք առաւ ձերբակալելու. Աչտարակի մօտ ձերբակալեց և երբ երևան էր բերում դատարանին յանձնելու, ճանապարհին փախուստի փորձ արեց ու պահակների ձեռքով սպանուեց:

Կառավարութեան ձեռք առած ընդհանուր միջոցներից ես պիտի յիշեմ դրսից հայ ներմուծելու աշխատանքը. անտեսական տագնապի դլխաւոր պատճառներից մէկն է հայի պակասը, որի ստացման համար կառավարութիւնը ամէն ջանք գործ դրեց. միաժամանակ օրէնք հրատարակեց երկրի հայը՝ կուտակած մասնաւոր անձանց մօտ՝ հաւաքելու և չունևորներին բաժանելու համար: